ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ
ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

12 ապրիլի 2024թ. *ք. Երևան*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ ՄԽ-Ո-06
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցութային խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) Արուսյակ Ջուլհակյանի, Սոնա Խալաֆյանի, Նինա Փիրումյանի, Արթուր Հովսեփյանի, Արմեն Ասատրյանի կազմով, 2024թ. ապրիլի 12-ին իրականացրեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի հավակնորդների ներկայացրած փաստաթղթերի ամբողջականության և համապատասխանության ստուգում:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 10.1-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Խորհուրդը սահմանում է մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը: Խորհուրդը իր՝ 11.01.2024թ. որոշմամբ, սահմանել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Ուսումնասիրելով հավակնորդներ Նվարդ Վարդանյանի, Նարինե Ավետիսյանի, Վաղարշ Աղաբեկյանի և Հրաչյա Աբրահամյանի ներկայացրած հայտերը՝ Խորհուրդը

Պ Ա Ր Զ Ե Ց

Նվարդ Վարդանյանի, Նարինե Ավետիսյանի, Վաղարշ Աղաբեկյանի և Հրաչյա Աբրահամյանի ներկայացրած փաստաթղթերն ամբողջական են և

համապատասխանում են Խորհրդի 11.01.2024թ. որոշմամբ սահմանված անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին:

Հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 10.1-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 7-րդ կետերը և 10.2-րդ հոդվածի 10-րդ և 13-րդ մասերը՝ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հաստատել Նվարդ Վարդանյանի հայտը,
2. Հաստատել Նարինե Ավետիսյանի հայտը,
3. Հաստատել Վաղարշ Աղաբեկյանի հայտը,
4. Հաստատել Հրաչյա Աբրահամյանի հայտը,
5. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի հարցազրույցի փուլը (այսուհետ՝ Հարցազրույց) անցկացնել բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով կատարված հարցումների պատասխանները ստանալուց հետո 14-օրյա ժամկետում, ԱԺ վարչական շենքում,
6. Հարցազրույցի տևողությունը յուրաքանչյուր հավակնորդի համար սահմանել մինչև մեկուկես ժամ,
7. Սահմանել հավակնորդների Հարցազրույցի փուլի հերթացուցակը ըստ այբբենական կարգի,
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրվանից:

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՐՈՒՍՅԱԿ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՍՈՆԱ ԽԱԼԱՖՅԱՆ

ՆԻՆԱ ՓԻՐՈՒՄՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ